

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի
Հանրապետական փուլ-2020
11-րդ դասարան-120 րոպե

№ 1-4

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Թարգմանաբար ի՞նչ է նշանակում *խլամ* բառը. (0,5 միավոր)

1. եղբայրասիրություն
2. երջանկություն
3. ողջախոհություն
4. հնազանդություն

2. Հայոց ո՞ր կաթողիկոսի օրոք է հրատարակվել հայ առաջին պարբերականը. (0,5 միավոր)

1. Սիմեոն Ա. Երևանցի
2. Ղուկաս Ա. Կարնեցի
3. Աբրահամ Ա. Կրետացի
4. Մովսես Գ. Տաթևացի

3. Հայոց եկեղեցու նվիրապետական ո՞ր աթոռի ներկայացուցիչներն են Հասան-Ջալալյանները. (0,5 միավոր)

- 1) Սսի կաթողիկոսություն
- 2) Աղթամարի կաթողիկոսություն
- 3) Աղվանից կաթողիկոսություն
- 4) Երուսաղեմի պատրիարքություն

4. Ո՞ր ճակատամարտում են աչքի ընկել Հովհաննես և Տաճատ քահանաների կազմակերպած աշխարհագորային ջոկատները. (0,5 միավոր)

- 1) Սարդարապատի
- 2) Ղարաքիլիսայի
- 3) Բաշ-Ապարանի
- 4) Ալեքսանդրապոլի

№ 5-8

Կառուցված պատասխանով առաջադրանքներ
(1x4= 4 միավոր)

5. Ըստ -----՝ Աստված ոչ թե մի տեղ է, այլ Ինքը տեղ է իր համար, ոչ թե գտնվում է ժամանակի մեջ, այլ ժամանակն է Նրանից գոյացել: Աստված Ինքն է ամեն ինչի սկիզբը և հավիտենական է: (1 միավոր)
6. ՀՀ ազգային ժողովի կողմից ----- թ. ընդունվել է եկեղեցի-պետություն հարաբերությունները կարգավորող օրենքը : (1 միավոր)
7. Ըստ Փավստոս Բուզանդի՝ -----
« Ճգնում էր պատերազմի ճակատներում, և երբեք թույլ չէր տալիս, որ Հայոց աշխարհի սահմաններից գեթ մի կտոր հող օտարվի» (1 միավոր)
8. ----- գրել է. «ով պատմություն չգիտի, նա մտավոր կույր է և ողջ կյանքում կիսարխափի մթության մեջ»: (1 միավոր)

№ 9-10

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 6 փաստից

9. Վանքի անունը համապատասխանեցնել գավառի անվանը. (1 միավոր)

- | | |
|----------------------|-----------------|
| 1. Ռշտունյաց գավառ | ա) Հնձուց վանք |
| 2. Վայոց ձոր | բ) Հոռոմոս |
| 3. Կարնո գավառ | գ) Նարեկավանք |
| 4. Կայեն գավառ | դ) Կամրջաձոր |
| 5. Արշարունյաց գավառ | ե) Հովհաննավանք |
| 6. Շիրակ | զ) Ցախաց քար |
| | է) Գետիկի վանք |

1	
2	
3	
4	
5	
6	

10. Հայոց կաթողիկոսների անունները համապատասխանեցնել իրենց հետ կապ ունեցող իրադարձություններին. (1 միավոր)

1. Ս.Ներսես Ա. Պարթև
2. Ս.Հովհաննես Գ. Օձնեցի
3. Գարեգին Ա. Սարգիսյան
4. Զաքարիա Ա. Չազեցի
5. Գևորգ Ե.Սուրենյանց
6. Ներսես Ե. Աշտարակեցի

1	
2	
3	
4	
5	
6	

- ա) Նրա հանձնարարությամբ կազմվել և Թիֆլիսում հրատարակվել է Մայր Աթոռի Մատենադարան-ձեռագրատան ձեռագրերի ցուցակը:
- բ) Նրա օրոք արգելվել է բազմակնությունը, անչափահասների ամուսնությունը, ինչպես նաև ամուսնությունը մերձավոր հարազատների միջև:
- գ) Նիկոլայ 1-ինը նորընտիր կաթողիկոսին պարզևատրել է ռուսական բարձրագույն շքանշանով:
- դ) 719 թ. նրա նախաձեռնությամբ Դվինում գումարվել է եկեղեցական ժողով, որտեղ հատուկ կանոն է ընդունվում պավլիկյանների դեմ:
- ե) Միջագետքի արաբ ամիրայի հետ բանակցելու ժամանակ նա առաջ է քաշել Աշոտին թագ շնորհելու անհրաժեշտության հարցը:
- զ) Վեհափառ հայրապետը հայտարարել է. *«Այսօր մեր գոյամարտը, անկախ մեր ցանկությունից, որքան էլ երկար տևի, ոչ մի դեպքում ընկրկում, նահանջ, թուլացում մենք մեզ չենք կարող թույլատրել: Դա դավաճանություն է Աստծուն, դավաճանություն է հայրենիքին»:*
- է) Նա հետևյալ կոչով է դիմել ժողովրդին. *«Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնությունները: Ես համոզված եմ նաև, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դեռ չի ասել իր վերջին խոսքը: Եվ խոսքն այդ պիտի լինի հաղթական»:*

№ 11

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանք

11. Ամենայն Հայոց Կաթողիկոսների անունները դասավորել ըստ նրանց կաթողիկոս դառնալու հաջորդականության. (1 միավոր)

- ա) Հովհաննես Ե. Դրասխանակերտցի
- բ) Սարգիս Ա. Սևանցի
- գ) Բաբկեն Ա. Ոթմսեցի
- դ) Ստեփանոս Ե. Սալմաստեցի
- ե) Հակոբ Դ. Ջուղայեցի
- զ) Ներսես Բ. Բագրևանդցի
- է) Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի
- ը) Անանիա Ա. Մոկացի

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	

№ 12-13

Աշխատանք սկզբնադրուրով

12. «Մինչև որ ժողովուրդը չվարժվի անձնագոհության, չի ունենա իր ազատությունը, մինչև որ ժողովուրդը չվարժվի իր եսը ենթարկելու համայնքին, չի ունենա իր պետականությունը»:

Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:

(1 միավոր)

13. «Բյուզանդիան պարտական էր Հայաստանին հրաշալի զինվորներով, քանի որ X դարում հայկական ջոկատները բյուզանդական բանակի լավագույն զորամասերն էին համարվում»:

1. Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:

(1 միավոր)

2. Ո՞ր ազգի ներկայացուցիչ է վերոնշյալ խոսքերի հեղինակը:

(1 միավոր)

№ 14-15

*Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի
ինացություն պահանջող առաջադրանքներ*

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է սխալ: (0,5 միավոր)

Ս.Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի, Ս. Գրիգոր Տաթևացի, Ս. Եսայի Նչեցի,
Թովմա Արծրունի

14.2 . Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է սխալ: (0,5 միավոր)

Բարսեղ Ա Անեցի, Գրիգոր Գ Պահլավունի, Ս. Ներսես Դ Շնորհալի, Գրիգոր Դ Տղա,
Կիրակոս Վիրապեցի

15.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված ճիշտ շարքը, ավելացնել տվյալ շարքին համապատասխանող անունը: *(1 միավոր)*

- ա. Հայկ, Թորգոմ, Թիրաս, Գամեր,...
 - բ. Հայկ, Թորգոմ, Թիրաս, Արամ ...
 - գ. Հայկ, Թորգոմ, Գամեր, Հարմա...
-
-

15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: *(1 միավոր)*

- ա. Միս, Աշտիշատ, Հռոմկլա, Շահապիվան
 - բ. Արտաշատ, Տաթև, Աշտիշատ, Աղթամար
 - գ. Շահապիվան, Տարսոն, Շուղրի Կարմիր վանք, Կարս
-
-

15.3. Ի՞նչ սկզբունքով է կազմված ճիշտ շարքը, ավեացնել տվյալ շարքին համապատասխանող ես մեկ անվանում: *(1 միավոր)*

- ա. Ամենայն Հայոց կաթողիկոսություն, Աղթամարի կաթողիկոսություն, Երուսաղեմի հայոց պատրիարքություն Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն, Սյունյաց մետրոպոլիտություն, Սսի կաթողիկոսություն ...
 - բ. Ամենայն Հայոց կաթողիկոսություն, Ադանայի կաթողիկոսություն, Արցախի կաթողիկոսություն, Երուսաղեմի հայոց պատրիարքություն, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն, Բջնիի եպիսկոպոսություն ...
 - գ. Ամենայն Հայոց կաթողիկոսություն, Արցախի կաթողիկոսություն, Սսի կաթողիկոսություն, Երուսաղեմի հայոց պատրիարքություն, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն, Սյունյաց մետրոպոլիտություն ...
-
-

№ 16

Նկար-առաջադրանք՝ կազմված երկու հարցից (8 x 0,25 = 2 միավոր)

16. ա. Ովքե՞ր են պատկերված:
բ. Գրել նրանց գահակալման տարիները:

1.



2.



3.



4.



1. и. _____ ф. _____

2. и. _____ ф. _____

3. и. _____ ф. _____

4. и. _____ ф. _____

17. Շարադրանք

(2 միավոր)

1. Ներկայացրեք «Ազգ» հասկացությունը: Որո՞նք են ազգերին բնութագրող հիմնական հատկանիշները:
2. Թվարկեք Հայոց եկեղեցու խորհուրդները: Որո՞նք են դրանցից պարտադիր քրիստոնյայի համար: Ինչու:
3. Թվարկեք Հայոց եկեղեցու տաղավար տոները, նշեք այդ տոները նշելու օրերը:
4. Քրիստոնեական-ազգային արժեքների պահպանումն ընտանիքում ինչպե՞ս կարող է նպաստել «հայ» տեսակի շարունակականությանն ու հարատևմանը: